ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԼԲՈՒԼՅԱՆ ՀՈՎԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Մ. Մ. Մանուկյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ա. Վ. Աբրահամյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Լ. Մ. Պողոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. ապրիլի 6-ին, Ժամը 12^{00}–ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի “Մանկավարժություն” 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մարտի 6-ին:

Մասնագիտական 020 խորհրդի գիտ. քարտուղար
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ **Ա.Հ.ՍՎԱՋՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Հայաստանում տեղի ունեցող հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային փոփոխությունները առաջ են քաշում նոր անհատի ձևավորման, կայացման անհրաժեշտությունը: Այս հանգամանքը անմիջականորեն ազդում է կրթական համակարգի զարգացման վրա, քանի որ 21–րդ դարում կրթությունը դառնում է մարդկային գործունեության գերակա ոլորտ և դիտարկվում է որպես հասարակական և տնտեսական զարգացման գերակա գործոն: Հարափոփոխ կյանքի պայմաններում ավելի արդիական է դառնում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում գործելու, այդ ոլորտների զարգացման գործում անմիջական ազդեցություն ունենալու ունակ, զարգացած, հոգևոր, իրավական և մասնագիտական մշակույթ ունեցող հասարակության լիիրավ անդամի ձևավորման հիմնախնդիրը:

Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումները ժամանակակից դպրոցի առջև կոմպետենտ անձի զարգացման խնդիր են դնում, ինչը ենթադրում է մտավոր, իրավական, հասարակական, քաղաքացիական, հաղորդակցական, տեղեկատվական և այլ կոմպետենցիաների ձևավորում:

Հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորումը ժամանակակից կրթության, մասնագիտական կողմնորոշման կարևորագույն խնդիրներից է: Այս տեսանկյունից առավել կարևորվում է հանրակրթության երրորդ աստիճանը՝ ավագ դպրոցը, որի հիմնական առաքելություններից է ապահովել ինքնուրույն կյանք վարելու սովորողների պատրաստվածությունը, իրենց հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան նախնական, միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը:

Այս համատեքստում առավել քան կարևորվում է ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորումը, որը, լինելով մասնագիտական և անձնային որակների ամբողջություն, ենթադրում է շփվելու ընդունակություն, սեփական տեսակետը հայտնելու, դիմացինին լսելու և հասկանալու, բանավեճ վարելու կարողություն, հաղորդակցական խնդիրներ լուծելու, տարբեր հասարակական ոլորտներում իրեն դրսևորելու պատրաստակամություն, տարբեր հաղորդակցային իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողություն և ճկունություն:

Վերջին տասնամյակներում կոմպետենտ մոտեցման տարբեր կողմեր դիտարկվել են Վ.Ի. Բայդենկոյի, Ա.Գ. Բերմուսի, Վ.Ա. Բոլոտովի, Ե.Ն. Բոնդարևսկայայի, Ի.Ա. Զիմնյայայի, Ե.Յա. Կոգանի, Է.Ֆ. Զեյերի, Ս.Վ. Կուլնևիչի, Կ.Գ. Միտրոֆանովի, Ա.Կ. Մարկովայի, Վ.Վ. Սերիկովի, Ա.Վ. Խուտորսկոյի, Վ.Դ. Շադրիկովի, Ի.Ս. Յակիմանսկայայի և այլոց աշխատություններում:

Հաղորդակցական կոմպետենտության երևույթը բավականին լայնորեն դիտարկված է հոգեբանամանկավարժական գրականության մեջ՝ Ա.Ա. Բոդալյով, Ս.Լ. Բրատչենկո, Յ.Մ. Ժուկով, Յ.Ն. Եմելյանով, Օ.Վ. Կրյուչկովա, Ն.Վ. Կուզմինա, Ա.Վ. Մուդրիկ, Լ.Ա. Պետրովսկայա, Ե.Վ. Ռուդենսկի, Գ.Ս. Տրոֆիմովա, Յ.Լ. Խանին, Ս.Ռ. Գևորգյան, Ս.Բ. Սիսյան և այլք:

Լեզվի, մշակույթի և հաղորդակցման փոխկապակցվածությունը դիտարկված է մի շարք հետազոտողների՝ Մ.Մ. Բախտինի, Ա.Ա. Բրագինայի, Ռ. Բրեթոնի, Լ.Ի. Գրիշաևայի, Օ.Ա. Կոլիխանովայի, Ս.Գ. Տեր-Մինասովայի, Վ.Վ. Սաֆոնովայի, Պ.Վ. Սիսոևի, Մ.Գ. Աստվածատրյանի, Բ.Մ. Եսաջանյանի և այլոց աշխատություններում:

Սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորումը տարբեր գիտությունների՝ այդ թվում և մանկավարժության, հոգեբանության, հասարակագիտության, լեզվաբանության ուսումնասիրության առարկա է հանդիսանում: Չնայած այս ոլորտում քիչ չեն արտերկրյա գիտնականների աշխատությունները, սակայն հայ իրականության մեջ հիմնախնդիրը թերի է ուսումնասիրված, մասնավորապես դիտարկված չէ «հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտություն» եզրույթը, դեռևս լիարժեքորեն չի արժևորված հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման հարցը՝ հատկապես ավագ դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում:

Հետազոտվող խնդրի շրջանակներում բացահայտվել են այն էական հակասությունները, որոնցով էլ պայմանավորված է մեր հետազոտության արդիականությունը.

- ՀՀ՝ համաշխարհային կրթական համակարգ ինտեգրվելու պետական հրամայականի և հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման հիմնախնդրի ոչ բավարար մշակվածության միջև,
- կրթական համակարգի արդիականացման, անձնակողմնորոշիչ և կոմպետենտ մոտեցումների ներդրման և հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման՝ որպես ավագ դպրոցականների մասնա-գիտական կողմնորոշման և նրանց անձի զարգացման և կայացման հիմնախնդրի հանդեպ ցուցաբերած ոչ բավարար ուշադրության միջև,
- հանրակրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում առկա հանրամշակութային գիտելիքների և հաղորդակցական կարողությունների կարևորության և ավագ դպրոցի ուսումնա-դաստիարակչական գործընթացում հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման հիմնախնդրի նկատմամբ ոչ բավարար ուշադրության միջև:

Վերը նշված հակասություններն էլ պայմանավորել են ՀՀ հանրակրթության համակարգում ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման անհրաժեշտությունը:

Արդիականությունը, հակասությունները և ՀՀ հանրակրթության զարգացման միտումները հնարավորություն տվեցին ձևակերպել հետազոտության **հիմնախնդիրը՝** ավագ դպրոցում սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման առավել արդյունավետ մոդելի, մանկավարժական պայմանների, մեթոդական համալիրի մշակումը և փորձարարական ստուգումը:

Հետազոտության **նպատակն է** մշակել, տեսականորեն հիմնավորել և փորձարարությամբ ստուգել սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդելի, մանկավարժական պայմանների, մեթոդական համալիրի արդյունավետությունը:

Հետազոտության **օբյեկտն է** ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գործընթացը:

Հետազոտության **առարկան** ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդելն ու մանկավարժական պայմանների և մեթոդների համալիրն է:

Հետազոտության վարկածն այն է, որ ավագ դպրոցում սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գործընթացը որակապես կբարելավվի, եթե՝

- ուսումնասիրվեն սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման հիմնախնդրի գիտատեսական հիմքերը և հստակեցվի հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման հիմնախնդրի էությունը կոմպետենտային, լեզվամշակութաբանական, համակարգային, անձնակողմնորոշիչ և գործունային մոտեցումների համատեքստում,
- մշակվի ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդել,
- բացահայտվեն ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման միջոցները, այդ գործընթացի արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանները,
- մշակվի և ավագ դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում ներդրվի սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեթոդական համալիր:

Նպատակին, օբյեկտին, առարկային և վարկածին համապատասխան դրվել են հետազոտության հետևյալ **խնդիրները.**

1. Հիմնախնդրի վերաբերյալ գիտատեսական, մեթոդաբանական գրականության և հայեցակարգերի վերլուծության հիման վրա բացահայտել և ճշգրտել հետազոտության հասկացական կազմը, սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության

ձևավորման մեթոդաբանական հիմքերը, սկզբունքները, կառուցվածքը և բովանդակությունը:

2. Ուսումնասիրել ավագ դպրոցի կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը, բացահայտել և հիմնավորել ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մանկավարժական պայմանները:
3. Մշակել ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդել՝ հիմնված կոմպետենտային, լեզվամշակութաբանական, համակարգային, անձնակողմնորոշիչ և գործունային մոտեցումների վրա:
4. Մշակել, հիմնավորել և փորձարարությամբ ստուգել ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդելը և մեթոդական համալիրը:

Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել**.**

Հանրամշակութային հաղորդակցման հիմնախնդիրն ուսումնասիրող սոցիալ-հոգեբանական (Բ.Գ. Անանև, Ե.Վ. Անդրիենկո, Ա.Ա. Բոդալյով, Լ.Կ. Բուև, Ս.Ռ. Գևորգյան, Ի.Ա. Զիմնյայա, Բ.Ֆ. Լոմով, Մ.Ս. Կագան, Ն. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Կ.Կ. Պլատոնով, Բ.Դ. Պառիգին, Լ.Ս. Ռուբինշտեյն և այլոց) և մանկավարժական (Ե.Ն. Բառիշնիկով, Ա. Լոբանով, Ա.Վ. Մուդրիկ, Ի.Պ. Պոդլասի, Պ. Պիդկասիստի, Ս.Բ. Սիսյան և այլոց) հետազոտությունները:

Կրթության արդիականացման համատեքստում կոմպետենտային մոտեցման վերաբերյալ հայեցակարգային դրույթները՝ (Վ.Ի. Բայդենկո, Ա.Գ. Բերմուս, Է.Ն. Գուսինսկի, Է.Ֆ. Զեյեր, Ի.Ա. Զիմնյայա, Ա.Վ. Խուտորսկոյ, Ե.Ա. Կլիմով, Վ.Վ. Կրաևսկի, Բ.Ի. Հասան, Ս. Հոլլիֆորդ, Ա.Կ. Մարկովա, Պ. Մարշալ, Վ.Ա. Յակունին, Ս.Ե. Շիշով, Ա.Ի. Շչերբակով, Ս.Գ. Վերշլովսկի, Յու.Ն. Տուրչանինովա, Ս. Ուիդդետ, Ջ. Ուեյտմեն և այլք):

Հաղորդակցային կոմպետենտության վերաբերյալ Մ.Գ. Աստվածատրյանի, Ա.Ա. Բոդալյովի, Ս.Լ. Բրատչենկոյի, Մ.Օ. Գյոդակյանի, Յ.Ն. Եմելյանովի, Բ.Մ. Եսաջանյանի, Ի.Ա. Զիմնայայի, Ա.Վ. Խուտորսկոյի, Ի.Գ. Կարապետյանի, Ա.Գ. Կասպրժակի, Օ.Վ. Կրյուչկովայի, Ա.Վ. Մուդրիկի, Լ.Ա. Պետրովսկայայի, Գ.Ս. Տրոֆիմովայի և այլոց հետազոտությունները:

Լեզվի, մշակույթի, հաղորդակցման փոխկապակցվածության վերաբերյալ Մ.Մ. Բախտինի, Վ.Ս. Բիբլերի, Տ.Գ. Գրուշևիցկայայի, Բ.Մ. Եսաջանյանի, Վ.Վ. Կրասնիխի, Վ.Ա. Մասլովայի, Ե.Ի. Պասսովի, Ա.Պ. Սադոխինի, Է. Սեպիրի, Ս.Գ. Տեր-Մինասովայի, Վ.Վ. Սաֆոնովայի, Պ.Վ. Սիսոևի, և այլոց աշխատությունները:

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետևյալ **մեթոդները.**

տեսական՝ փիլիսոփայական, մանկավարժական, սոցիալ-հոգեբանական, լեզվաբանական, մեթոդաբանական, մասնագիտական գրականության, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի վերլուծություն,

հիմնախնդրի վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումների համակարգում և ընդհանրացում, մոդելավորում:

Էմպիրիկ՝ մանկավարժական դիտում, անկետավորում, թեսթավորում, հարցազրույց, մանկավարժական փորձարարություն,

մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներով արդյունքների վերլուծություն:

Հետազոտության փորձարարական բազա են հանդիսացել Երևան քաղաքի թիվ 2, Գ. Զոհրապի անվ. թիվ 43, Բ. Ժամկոչյանի անվ. թիվ 119 ավագ դպրոցները և Արարատի մարզի Մասիս գյուղի միջնակարգ դպրոցը:

Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2009-2010թթ.) հիմնավորվել և իմաստավորվել է հետազոտության հիմնախնդիրը, ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրին նվիրված գրականությունը, որոշվել են հետազոտության հիմնախնդիրը, թեման, սահմանվել է նպատակը, առաջադրվել են գիտական վարկածը և հետազոտության խնդիրները, հստակեցվել են հետազոտության հիմնական ուղղությունները, մշակվել է փորձարարական հետազոտության մեթոդիկան:

Երկրորդ փուլում (2011-2012թթ.) կառուցվել է ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդելը, ձևավորվել են փորձարարական խմբերը, ձևակերպվել են հետազոտության հիմնադրույթները, անցկացվել է հաստատող փորձարարություն, վերլուծվել են ստացված տվյալները, մշակվել է ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեթոդական համալիրը:

Երրորդ փուլում (2013-2014թթ.) անցկացվել է ձևավորող փորձարարություն, մշակվել, համեմատվել, համակարգվել են հետազոտության արդյունքները, հիմնավորվել և ձևակերպվել են հետազոտության եզրակացությունները:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվաբանական, մեթոդաբանական գրականության վերլուծության հիման վրա ճշգրտվել է «հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտություն» հասկացության էությունը, կոմպետենտային, լեզվամշակութաբանական, համակարգային, անձնակողմնորոշիչ և գործունային մոտեցումների հիման վրա բացահայտվել է հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գործընթացի բովանդակությունը:
2. Որոշվել են ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գործընթացի արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանները:
3. Մշակվել է սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդելը, որի հիմքում կոմպետենտային, լեզվամշակութաբանական, համակարգային, անձնակողմնորոշիչ և գործունային մոտեցումներն են և մարդասիրական, մշակութա-

հարմարության, փոխգործունեության, հանդուրժողականության, ստեղծագործական ակտիվության սկզբունքները, այն կազմված է կառուցվածքային՝ ճանաչողական, արժեքային, ռեֆլեքսիվ, և գործառնական՝ ընկալման, խոսքային, փոխգործուն-գործնական բաղադրամասերից:

4. Մշակվել և փորձարարությամբ ստուգվել է ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեթոդական համալիրի արդյունավետությունը:

Հետազոտության **տեսական** նշանակությունը.

1. Վերլուծվել և տեսականորեն հիմնավորվել են հետազոտության հիմնախնդրի առանցքային հասկացությունները՝ «հաղորդակցում», «հանրամշակութային հաղորդակցում», «կոմպետենցիա», «կոմպետենտություն»:
2. Համակարգվել են «հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտություն» հասկացության մեկնաբանման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներն ու հիմնադրույթները, ներկայացվել է սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գործընթացի բովանդակային-կառուցվածքային բնութագիրը:
3. Մշակվել է հայտորոշիչ գործիքակազմ և որոշվել են սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մակարդակի գնահատման չափանիշները՝ ճանաչողական ակտիվության, հաղորդակցային-գործունային, դրդապատճառային-պահանջմունքային, արժեքային-ապրումակցային:

Հետազոտության **գործնական** նշանակությունը.

1. Մշակված, գիտափորձով հիմնավորված ավագ դպրոցականների հանրամշակութայն հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մանկավարժական պայմանները և մեթոդական համալիրը կարող են կիրառվել ավագ դպրոցներում:
2. Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքները, մեթոդական հանձնարարականները, մեր կողմից առանձնացված ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ուսումնա-մեթոդական նյութերը կարող են օգտակար լինել ընդհանուր առմամբ «Հումանիտար գիտություններ» ուսումնական բնագավառի առարկաների դասավանդման, թեմատիկ ծրագրերի մշակման, ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման գործընթացներում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

1. Սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորումը ժամանակակից ավագ դպրոցի գերակա խնդիրներից է, որը, լինելով մասնագիտական և անձնային որակների միասնություն,

ենթադրում է շփվելու ընդունակություն, սեփական տեսակետը հայտնելու, դիմացինին լսելու և հասկանալու, բանավեճ վարելու կարողություն, հաղորդակցական խնդիրներ լուծելու, տարբեր հասարակական իրավիճակներում և ոլորտներում իրեն դրսևորելու պատրաստակամություն, հաղորդակցական տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողություն և ճկունություն:

2. Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդելի ամբողջական կառուցվածքը, որը ներառում է մանկավարժական մոտեցումները, սկզբունքները, կառուցվածքային և գործառական բաղադրամասերը, միջոցները:
3. Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մանկավարժական պայմանները:
4. Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեթոդական համալիրը, որը ուսուցման տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների, ձևերի, եղանակների, առանձնահատկությունների ամբողջությունն է:
5. Հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մակարդակները, դրանց գնահատման չափանիշները՝ ճանաչողական ակտիվության, դրդապատճառային-պահանջմունքային, արժեքային-ապրումակցային:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են հիմնախնդրի բնագավառում առկա փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվաբանական, մեթոդական ու մասնագիտական գրականության, տեսությունների ու հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության գիտատեսական և մեթոդաբանական բազայով, հետազոտության նպատակին, առարկային ու խնդիրներին համարժեք ընտրված մեթոդներով, տեսական արդի նվաճումների և մշակված հայեցակարգերի լայն կիրառմամբ, տեսական հետազոտության փորձարարական հիմնավորմամբ, փորձարարական հետազոտության տվյալների վերլուծությամբ, ամփոփմամբ և հիմնավորված եզրահանգումներով:

Հետազոտության փորձաքննությունն իրականացել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի նիստերում, հրատարակված գիտական հոդվածներում, գիտափորձի բազա հանդիսացած դպրոցներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 167 էջ, այն ներառում է 1 գծանկար, 5 աղյուսակ, 5 տրամագիր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **“Հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը”** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ *«Հաղորդակցում» եզրույթի համեմատական բնութագիրը սոցիալ-հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ”* ենթագլխում ներկայացված է “հաղորդակցում” և “շփում” հասկացությունների համեմատական բնութագիրը փիլիսոփայական, հոգեբանական, լեզվաբանական, մանկավարժական տեսանկյուններից: Վերլուծված են արտերկրի և հայ գիտնականների տեսակետներն ու հայեցակարգային մոտեցումները: Դիտարկված և հիմնավորված է հանրամշակութային հաղորդակցման գործընթացի էությունը, որը պայմանավորված է հաղորդակցվողների ներքին մշակույթով, ընդունակություններով և պատրաստությամբ, նպաստում է անհատի՝ սոցիալական տարբեր խմբերում ինտեգրմանը, նրանց արդյունավետ փոխգործունեությանը:

“*Հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության էությունը, կառուցվածքը և համեմատական բնութագիրը”* խորագիրը կրող երկրորդ ենթագլխում ներկայացվել է կոմպետենտային մոտեցման գաղափարը մանկավարժության մեջ: Կոմպետենտային մոտեցման համատեքստում վերլուծված և հիմնավորված են “կոմպետենտություն” և “կոմպետենցիա” հասկացությունները: Կրթական չափորոշիչների օրինակի վրա հիմնավորելով կարելի է ասել, որ կոմպետենցիաները կրթության բովանդակության նվազագույնն են, մինչդեռ կոմպետենտությունը շրջանավարտներին ներկայացվող պահանջն է: Այսպիսով, կոմպետենցիաները կոմպետենտության կառուցվածքային բաղադրիչներն են, իսկ կոմպետենտությունը՝ կրթության վերջնարդյունքը:

Ձևակերպված է «հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտություն» եզրույթի հեղինակային մեկնաբանումը. լեզվաբանական, գործնական, հասարակամշակութային, տարածաշրջանային գիտելիքների, կարողությունների և հմտությունների, անձնային և հոգեբանական որակների և ընդունակությունների ամբողջություն՝ ուղղված ավագ դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում և, առհասարակ, հասարակության մեջ հաղորդակցային խնդիրների լուծմանը: Սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորումը ժամանակակից ավագ դպրոցի գերակա խնդիրներից է, որը, լինելով մասնագիտական և անձնային

որակների միասնություն, ենթադրում է շփվելու ընդունակություն, սեփական տեսակետը հայտնելու, դիմացինին լսելու և հասկանալու, բանավեճ վարելու կարողություն, հաղորդակցական խնդիրներ լուծելու, տարբեր հասարակական ոլորտներում իրեն դրսևորելու պատրաստություն, տարբեր հաղորդակցային իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողություն և ճկունություն:

Երրորդ՝ "*Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման տեսական մոդելը*" ենթագխում ներկայացված է մոդելի կառուցվածքը, հիմնավորված են մոդելի բաղադրիչները (գծապատկեր 1):

Ատենախոսության **երկրորդ՝ "Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գործընթացի նախագծումը, իրականացումը եվ արդյունքների գնահատումը"** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ *"Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման միջոցները"* ենթագլխում հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից բացահայտվել, տեսականորեն հիմնավորվել և բնութագրվել են հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման հետևյալ միջոցները. լեզուն, գեղարվեստական տեքստը, երկխոսությունը, գրավոր խոսքը, ոչ խոսքային հաղորդակցումը:

Երկրորդ՝ *"Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեթոդական ապահովումը*" խորագիրը կրող ենթագլխում բացահայտվել և հիմնավորվել են ավագ դպրոցում հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները՝

- գործընթացի առաջնային նպատակների սահմանումը, տեսական և գործնական կողմերի մշակումը, մեթոդական համալիրի՝ տեխ-նոլոգիաների, մեթոդների, միջոցների, ձևերի, առանձ-նահատկությունների որոշումը հումանիտար առարկաների ուսուցման ընդհանուր համակարգում,
- ավագ դպրոցի մարդասիրական ուղղվածության կրթա-դաստիարակչական միջավայրի ապահովում,

Գծապատկեր 1.

Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդելի կառուցվածքը



- մանկավարժական կոլեկտիվի կողմից մանկավարժական փոխգործունեության և հանդուրժողական մթնոլորտի ստեղծումը,
- կոմպետենտ մոտեցման իրականացումը,
- ավագ դպրոցի մանկավարժական, մասնագիտական և լեզվամշակութային հաղորդակցական միջավայրի ապահովումը:

Մշակվել և դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում փորձարարությամբ ստուգվել է հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեթոդական համալիրը: Մեթոդական համալիրը մշակելիս հիմնվել ենք «Ֆրանսերեն» առարկայի հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչների և ծրագրերի վրա, որտեղ հատուկ տեղ է հատկացված հանրամշակութային գիտելիքներին:

Հիմնավորված է, որ մանկավարժական գործընթացում հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորումն ավելի արդյունավետ կլինի, եթե ուսումնասիրվի, որոշակիացվի նոր տեխնոլոգիաների տեղն ու դերը հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման գործընթացում և, այնուհետև այդ տեխնոլոգիաները ներդրվեն ժամանակակից մանկավարժական գործընթաց: Առանձնացվել են հետևյալ մանկավարժական տեխնոլոգիաների տեսական հիմնավորումը և գործնական կիրառելիությունը.

- խաղային՝ դերային, նմանակող, հետազոտական խաղեր, օրինակ՝ «Հարցազրույց գործատուի հետ» թեմայով խաղ,
- պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայով մշակվել է «Կարծրատիպերը և օտար մշակույթի ընկալումը» թեմայով դաս,
- Ե.Ի. Պասսովի օտար մշակույթի ուսուցման հաղորդակցային տեխնոլոգիա, որի իրականացման ժամանակ կարևորել ենք դասարանում տիրող մթնոլորտը և ուսուցման գործընթացի սուբյեկտների փոխհարաբերությունները, սովորողների ակտիվ գործունեությունը, մշակութահարմարության սկզբունքը և այլն:
- կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիան կիրառվել է տեքստերի ուսումնասիրման գործընթացում, կոլեկտիվ աշխատանքի համար առանձնացվել են հինգ տեքստեր՝ “Փարիզ”, “Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզ”, “Փարիզ (պատմություն և քաղաքաշինություն)”, “Մտավոր կենտրոն”, “Մոնմարտր”, “Էյֆելյան աշտարակ”, “Աստղի հրապարակ”:
- ուսուցման հեռահաղորդակցական կամ համակարգչային տեխնոլոգիան նպաստել է թեմատիկ ներկայացումների պատրաստման համար թե՛ ուսուցչի կողմից, թե՛ աշակերտների: Օրինակ, սովորողները պատրաստել են ներկայացում Ֆրանսիայի և ֆրանսախոս երկրների՝ Շվեյցարիայի, Բելգիայի, Կանադայի, Լյուքսեմբուրգի, Հաիթիի, Մալիի, Նիգերիայի, Սենեգալի, Կոնգոյի, Զաիրի, նրանց մշակույթի ու ժողովրդի մասին:
- նախագծային տեխնոլոգիան, որն օգտագործվել է որպես համալրող, ամբողջական վերջնաարդյունքի ներկայացման տեխնոլոգիա: Փորձարարական խմբերի սովորողները բաժանվել են փոքր

ենթախմբերի, յուրաքանչյուր ենթախմբին հանձնարարվել է նախագծի թեմա, որը նրանք ողջ գիտափորձի ընթացքում մշակել են, ձևակերպել, ներկայացրել: Օրինակ, “Ժամանակակից հասարակության խնդիրները և երիտասարդները”, “Առողջություն և առողջ ապրելակերպ”, “Ճանապարհորդություն”, “Նորաձևություն” և այլն:

Երրորդ՝ *”Փորձարարական հետազոտության իրականացման մեթոդիկան, արդյունքների վերլուծությունը և գնահատումը” ենթագլխում ներկայացվել է փորձարարական հետազոտության նպատակը, աշխատանքի փուլերը, վերլուծվել են փորձարարական աշխատանքների արդյունքները:*

Փորձարարական հետազոտությունն անցկացվել է 3 փուլով.

1. Հաստատող փուլ (ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման սկզբնական մակարդակի ախտորոշում),
2. Ձևավորող փուլ (մշակված մեթոդական համալիրի ներդրում փորձարարական խմբերում),
3. Արձանագրող փուլ (փորձարարական ստուգման արդյունքների հետազոտում, վերլուծում):

Փորձարարական հետազոտությունն իրականացվել է Երևան քաղաքի թիվ 2, Գ. Զոհրապի անվ. թիվ 43, Բ. Ժամկոչյանի անվ. թիվ 119 ավագ դպրոցներում, Արարատի մարզի Մասիս գյուղի միջնակարգ դպրոցում:

Փորձարարական հետազոտության հաստատող և արձանագրող փուլերի իրականացման համար մշակվել է հատուկ հայտորոշիչ մեթոդիկա, որը ներառում է հետևյալ բաղադրամասերը.

1. Մանկավարժական դիտում, զրույց,
2. “Ֆրանսերեն թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ ստուգողական գրավոր աշխատանքների” տետրեր,
3. Մի շարք հայտորոշիչ մեթոդիկաներ՝ “Սոցիալ-հաղորդակցական կոմպետենտության հայտորոշման մեթոդիկա”, “Միջանձնային հաղորդակցման մեջ հուզական պատնեշների հայտորոշման մեթոդիկա” /ըստ Վ.Վ. Բոյկոյի/, “Հաղորդակցային ազդակների /իմպուլսիվության/ ներուժի հայտորոշման մեթոդիկա” /Վ.Ա. Լոսենկով/, “Կոնֆիկտներին դիմակայելու կարողության մակարդակի հայտորոշման մեթոդիկա”:

Անցկացված մեթոդիկաների արդյունքների վերլուծության արդյունքում առանձնացվել են չորս չափանիշներ՝

- ճանաչողական ակտիվության,
- հաղորդակցային-գործունային,
- դրդապատճառային-պահանջմունքային,
- արժեքային-ապրումակցային:

Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորվածության մակարդակը որոշելու համար բոլոր

չափանիշների ստացված արդյունքները ընդհանրացվել և ներկայացվել են աղյուսակի և տրամագրի տեսքով:

Աղյուսակ 1

Հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորվածության մակարդակի ընդհանրացված արդյունքները

Մակարդակներ		**Փորձարարությունից առաջ**		**Փորձարարությունից հետո**	
		սպուգ. խ.	*փորձ. խ.*	*սպուգ. խ.*	*փորձ. խ*
Բարձր	%	11	11	19.1	32.9
Միջին	%	40.3	40.3	52.6	59.5
Ցածր	%	48.7	48.7	28.3	7.6



Տրամագիր 1. *Հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորվածության մակարդակի ընդհանրացված արդյունքները*

Փորձարարական խմբերում փորձարարական հետազոտության ավարտին գրանցվեց դրական տեղաշարժեր: Արդյունքում պարզ դարձավ, որ հաղորդակցական կոմպետենտությունը կենսական նշանակություն ունեցող երևույթ է, որը չի տրվում մեզ ի ծնե: Յուրաքանչյուր անհատ պետք է նպատակաուղղված աշխատի և կատարելագործի հաղորդակցական հմտությունները տարբեր բնագավառներում և միջավայրերում արդյունավետ գործելու և դրսևորելու համար: Կարևորվեց նաև այն գաղափարը, որ հաղորդակցման մեջ էական է ոչ միայն խոսելու, բանավիճելու, սեփական տեսակետը հայտնելու կարողությունները, այլ նաև դիմացինին լսելու, ուրիշի

կարծիքը հարգելու, ուրիշի տեսակետը օբյեկտիվ գնահատելու կարողությունները:

Փորձարարական աշխատանքների արդյունքների համեմատական վերլուծությունը գիտափորձից առաջ և հետո վկայում են մեր կողմից առաջադրված մոդելի և մեթոդական համալիրի արդյունավետությունը: Կարելի է փաստել, որ նպատակաուղղված և մեթոդապես ճիշտ կազմակերպված փորձարարական աշխատանքների արդյունքում ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորվածության մակարդակը բարելավվեց: Ստացված տվյալների համեմատական վերլուծությունը հաստատեց ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդկցական կոմպետենտության ձևավորման մեր կողմից մշակված մոդելի, մանկավարժական պայմանների և մեթոդական համալիրի արդյունավետությունը:

Վերոնշյալ հիմնախնդրի տեսական նշանակությունը և մանկավարժական գիտափորձի արդյունքները հավաստեցին մեր կողմից առաջարկված վարկածի ճշմարտացիությունը՝ թույլ տալով ձևակերպել հետևյալ եզրակացությունները.

1. Հիմնախնդրի վերաբերյալ գիտատեսական, մեթոդաբանական գրականության և հայեցակարգերի վերլուծության արդյունքում հստակեցվել է հետազոտության հասկացական կազմը և հիմնավորվել է «հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորում» եզրույթը, այն է՝ լեզվաբանական, գործնական, հասարակամշակութային, տարածաշրջանային գիտելիքների, կարողությունների և հմտությունների, անձնային և հոգեբանական որակների և ընդունակությունների ամբողջություն՝ ուղղված ավագ դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում և, առհասարակ, հասարակության մեջ հաղորդակցային խնդիրների լուծմանը:
2. Հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մոդելի հիմքում կոմպետենտային, լեզվամշակութաբանական, համակարգային, անձնակողմնորոշիչ և գործունային մոտեցումներն են, այն ուղղորդվում է մարդասիրական, մշակութահարմարության, փոխգործունեության, հանդուրժողականության, ստեղծագործական ակտիվության սկզբունքներով, կազմված է կառուցվածքային՝ ճանաչողական, արժեքային, ռեֆլեքսիվ, և գործառնական՝ ընկալման, խոսքային, փոխգործուն-գործնական բաղադրամասերից:
3. Բացահայտվել և հիմնավորվել են ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման միջոցները՝ լեզուն, գեղարվեստական տեքստը, երկխոսությունը, գրավոր խոսքը, ոչ խոսքային հաղորդակցումը:
4. Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման վերաբերյալ մանկավարժական մոտեցումները, նպատակը, սկզբունքները և բաղադրամասերը, ինչպես

նաև արտաքին և ներքին գործոնները պայմանավորեցին համապատասխան մանկավարժական պայմանների ապահովում: Որպես այդպիսիք առանձնացրել ենք.

- գործընթացի առաջնային նպատակների սահմանում, մեթոդական համալիրի մշակումը,
- ավագ դպրոցի մարդասիրական ուղղվածության կրթադաստիարակչական միջավայրի ապահովումը:
- մանկավարժական կոլեկտիվի կողմից մանկավարժական փոխգործունեության և հանդուրժողական մթնոլորտի ստեղծումը,
- կոմպետենտային մոտեցման իրականացումը,
- ավագ դպրոցի մանկավարժական, մասնագիտական և լեզվամշակութային հաղորդակցական միջավայրի ապահովումը:

5. Մշակվել և ավագ դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում ներդրվել է սովորողների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեթոդական համալիրը: Որոշակիացվել և մանկավարժական գործընթացում ներդրվել են մեր կողմից առանձնացված մանկավարժական մի շարք տեխնոլոգիաներ՝ խաղային, պրոբլեմային ուսուցման, Ե.Ի. Պասսովի օտար մշակույթի ուսուցման հաղորդակցային, կոլեկտիվ ուսուցման, ուսուցման հեռահաղորդակցական կամ համակարգչային, նախագծային:
6. Բացահայտվել են հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մակարդակները՝ բարձր, միջին, ցածր, չափանիշներն ու ցուցանիշները՝ ճանաչողական ակտիվության, հաղորդակցական-գործունային, դրդապատճառային-պահանջմունքային, արժեքային-ապրումակցային:
7. Փորձարարական ստուգման միջոցով հավաստիացվել և հիմնավորվել է ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեր կողմից առաջարկած մոդելի և մեթոդական համալիրի արդյունավետությունը: Երևան քաղաքի թիվ 2, Գ. Զոհրապի անվ. թիվ 43, Բ. Ժամկոչյանի անվ. թիվ 119 ավագ և Արարատի մարզի Մասիս գյուղի միջնակարգ դպրոցներում իրականացված գիտափորձի վերլուծությունը ըստ սահմանված չափանիշների և դրանց ընդհանրացված համեմատական արդյունքները ցույց տվեցին, որ բարձր մակարդակը ստուգողական խնբում ավելացել է 8.1, իսկ փորձարարական խմբում՝ 21.9 %-ով: Միջին մակարդակում ստուգողական խմբում ավելացումը կազմել էր 12.3 %, իսկ փորձարարական խմբում՝ 19.2 %: Ստուգողական խմբերում ցածր մակարդակը նվազել է 20.4, իսկ փորձարարական խմբերում՝ 41.1 %-ով:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Բլբուլյան Հ.Վ. Կոմպետենտ մոտեցումը որպես արդի մանկավարժա-գիտության գերակա ուղղություն: “ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտ.հանդես”-2013 “Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար”, 2013, էջ 165-167
2. Բլբուլյան Հ.Վ. Օտար լեզուն որպես սովորողների սոցիալ-հաղորդակցական կոմպետենտության ձևավորման միջոց: “Մանկավարժական միտք” գիտ.հանդես, 3/4, 2013, էջ 145-150
3. Բլբուլյան Հ.Վ. Սոցիալ-հաղորդակցական կոմպետենտության ձևավորման հիմնախնդիրն ավագ դպրոցում: Կրթությունը և գիտությունը Արցախում” գիտ.հանդես, 3/4, 2013, էջ 15-19
4. Բլբուլյան Հ.Վ. Ավագ դպրոցականների սոցիալ-հաղորդակցական կոմպետենտության ձևավորման տեսական մոդելը: Модернизация образования в контексте современных педагогических парадигм сборник научно-образовательных докладов и статей, Ереван, АГПУ, 2014, էջ 164-167
5. Բլբուլյան Հ.Վ. Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման մեթոդաբանական մոտեցումները: ԵՊԼՀ-ի ,, Բանբեր,, գիտ.հանդես, 1(36), 2016, էջ 134-141
6. Բլբուլյան Հ.Վ. Ավագ դպրոցականների հանրամշակութային հաղորդակցական կոմպետենտության ձևավորման տեխնոլոգիական ապահովումը: ԵՊԼՀ-ի ,, Բանբեր,, գիտ.հանդես, 1(36), 2016, էջ 142-153

БЛБУЛЯН ОВИК ВЛАДИМИРОВИЧ
ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ СОЦИОКУЛЬТУРНОЙ КОММУНИКАТИВНОЙ КОМПЕТЕНТНОСТИ УЧАЩИХСЯ В СТАРШЕЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 – «Теория и история педагогики».

Защита диссертации состоится 6–го апреля 2017 г. в 12^{00} часов на заседании специализированного совета 020 «Педагогика» ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Происходящие нововведения в сфере образования в РА перед современной школой ставят задачу подготовки компетентной личности, что предполагает формирование умственных, правовых, социальных, гражданских, коммуникативных, информационных компетенций. С этой точки зрения особо важную роль играет старшая школа, которая направлена на обеспечение готовности учащихся к самостоятельной жизни, возможности получить средне-специальное или высшее образорвание в соответствии с их способностями, интересами, умениями. В этом контексте особую роль играет социокультурная коммуникативная компетентность старших школьников, включающая профессиональные и личные качества и предполагающая способность общаться, умение выражать свое мнение, участвовать в дисуссии, слушать и понимать собеседника, готовность проявлять себя в разных общественных сферах, умение быстро ориентироваться в различных коммуникативных ситуациях.

Цель исследования разработать, теоретически особновать и экспериментально проверить эффективность модели, педагогических условий, методического комплекса формирования социокультурной коммуникативной компетентности учащихся.

В соответствии с целью, объектом, предметом и гипотезой были поставлены **задачи исследования**:

1. На основе анализа научно-теоретической, методологической литературы и концепций по проблеме выявить и уточнить категориальный аппарат исследования, методологические основы, принципы структура и содержание формирования социокультурной коммуникативной компетентности учащихся.
2. Разработать модель формирования социокультурной коммуникативной компетентности старших школьников на основе компетентностного, лингвокультурологического, системного, личностно-ориентированного и деятельностного подходов.
3. Изучить документы, отражающие содержание образования старшей школы, выявить и обосновать средства формирования социокультурной коммуникативной компетентности старших школьников.
4. Разработать, обосновать и экспериментально проверить методический комплекс формирования социокультурной коммуникативной компетентности старших школьников.

Научная новизна исследования:

1. На основе анализа философской, психолого-педагогической, лингвистической, методологической литературы конкретизирован сущность понятия

«социокультурная коммуникативная компетентность», на основе компетентностного, лингвокультурологического, системного, личностно-ориентированного и деятельностного подходов выявлено содержание процесса формирования социокультурной коммуникативной компетентности старших школьников.

2. Определены педагогические условия, обеспечивающие эффективность процесса формирования социокультурной коммуникативной компетентности старших школьников.
3. Разработана модель формирования социокультурной коммуникативной компетентности старших школьников на основе компетентностного, лингвокультурологического, системного, личностно-ориентированного и деятельностного подходов, принципов гуманизма, культуросообразности, взаимодействия, толерантности, творческой активности, состоит из структурного (познавательного, ценностного, рефлексивного) и функционального (перцептивного, речевого и интерактивно-практического) компонентов.
4. Разработана и экспериментально проверена эффективность методического комплекса формирования социокультурной коммуникативной компетентности старших школьников.

Теоретическая значимость исследования:

1. Анализированы и теоретически обоснованы ключевые понятия исследования: «коммуникация», «социокультурная коммуникация», «компетенция», «компетентность».
2. Структурированы существующие концептуальные подходы и основные положения трактовки понятия «социокультурная коммуникативная компетентность».
3. Определены критерии оценки уровня сформированности социокультурной коммуникативной компетентности учащихся: познавательной активности, коммуникативно-деятельностный, мотивационно-потребностный, ценностно-эмпатийный.

Практическая значимость исследования:

1. Разработанные и экспериментально проверенные педагогические условия и методический комплекс формирования социокультурной коммуникативной компетентности старших школьников могут быть применены в образовательном процессе старшей школы.
2. Результаты теоретического и эмпирического исследований, методические рекомендации, учебно-методические материалы могут быть полезны в преподавании предметов гуманитарного цикла, разработке тематических программ, в процессе профессиональной переподготовки и повышения квалификации учителей.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы, приложений. Общий объем диссертации составляет 167 компьютерных страниц, содержит 5 таблиц, 5 диаграмм, 1 рисунок.

HOVIK VLADIMIR BLBULYAN
PROBLEM OF FORMING SOCIOCULTURAL COMMUNICATIVE COMPETENCE OF THE HIGH SCHOOL STUDENTS

Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences (speciality 13.00.01- «Theory and History of Pedagogy»)

The defence of the thesis will be held at 12^{00} on Avril 06, 2017 at the session of the Special Board 020 «Pedagogy» HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

Address: 0010, Yerevan, Tigran Mets ave.,17

SUMMARY

The Relevance of the research: The innovations taking place in the educational sphere in the RA undertake the problem of training of a competentive person at the modern school, which means the forming of mental, lawful, social, civic, communicative and informational competences. This point of view means, that the high school, which leads the students to the self dependant life, to the opportunity to get special secondary or high education in accordance with their interests, abilities and skills, is of great importance. Sociocultural competence of the high school students is a special part of communicative language competence. It includes professional and personal quality, ability to listen to the interlocuter and understand him, readiness to show initiative in different social spheres, ability to orient quickly in various communicative situations.

The aim of the research: Is to work out and substantiate theoretically and to prove experimentally the effectiveness of the model, pedagogic conditions, methodological complex of developing the sociocultural communicative competence of the students

The objectives of the research are:

1. To reveal and specify categorial apparatus of the research, methodological basis, principles and contents of forming sociocultural communicative competence of the scientific-theoretical and methodological literature and concepts on this problem.
2. To work out a model of forming sociocultural communicative competence of the high school students on the base of the competent, linguistic- culturologic systematic, personally oriented and active approaches
3. To study the documents, which reflect the contents of the high school education, to reveal and to base the means of forming sociocultural communicative competence of the high school students.
4. To work out, to base and to check experimentally methodical complex of forming sociocultural communicative competence of the high school students.

SCIENTIFIC INNOVATION OF THE RESEARCH

1. The point of the concept << Sociocultural communicative competence>> on the basis of the analysis of the philosophical, psychological-pedagogic, linguistic and methodological literature has been specified. The content of the process of forming sociocultural communicative competence of the high school students on the basis of the competent, linguistic -culturologic, systematic, personally oriented and active approaches has been elaborated.
2. We determine pedagogic conditions, which assure the effectiveness of the process of forming sociocultural communicative competence of the high school students.

3. A model of forming sociocultural communicative competence of the high school students on the basis of the competent, linguistic-culturalogical, systematic, personally oriented and active approaches, principles of humanism, cultural confirmity, interactions, tolerance, creative activity, which consists of structural (cognitive, valuable, reflexive) and operational (perceptive, oral and ineteractive-practical) components has been worked out.
4. The effectiveness of the methodical complex of forming sociocultural communicative competence of the high school students has been worked out and experimentally proved.

THEORETICAL VALUE OF THE RESEARCH

1. The key concepts of the research: «communication», «sociocultural communication», and «competence » has been analysed and theoretically proved .
2. Existed conceptual approaches and main points of the concept «sociocultural communicative competence» are structured.
3. The criteria of the assessement of the level of forming sociocultural communicative competence of the students: cognitive activity, communicative activity, motivation-required, valuable-emphatic activities have been determined.

PRACTICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH

1. Worked out and experimentally checked pedagogic conditions and methodical complex of forming sociocultural communicative competence of the high school students can be used in the educational process at high school
2. The results of the theoretical and emperical researches, methodological recommendations, educational-methodological materials can be useful during the teaching process of the humanitarian subjects, during the working out of the thematic programmes, during the process of professional re-training and higher qualification of the teachers.

The structure and volume of the thesis: The thesis consists of an introduction, two chapters, a conclusion, references and appendices. The general volume of the thesis is 167 copmputer pages including 5 tables, 5 diagrams and 1 picture.